

55 աշխարհականք եւ կարգաւորք, ընտիր եւ սուրբ մարգրիկ :

Ծերունի մի Շահրօզ անուն , որ ի Ստամպուլ թագաւորին սարայէն փախուցեալ եկն Երուսաղէմ եւ մնաց քառսուն ամ . զնեց պախ-  
 60 չա մի երեքհարիւր ոսկու , զոր Շահրօզի պաղչա կոչեն . եւ աշխատէր ի վանքն ի մանկութենէ . եւ այժմ ծերացեալ չկարէ այլ ծանր բան գործել . միայն զէգիս պահէր եւ զոր ինչ ժողովէր իրեք անգամ ի տարոջն քառասնից  
 65 տայր Պարոնտէրին . եւ ինքն բոկ եւ գլխիրաց չըջէր եւ անսուաղ չորապաք կայր . հին չուէ վերարկմամբ :

Տեսի եւ այլ այր մի թէսպէհ գործող , որ եօթն ամ էր նմա անդ . զինչ վաստակէր՝ սուրբ  
 70 Երուսաղէմայ տայր . բոլոր ամն չորապաք . եւ օրն ճ՞Ս ծունր զնէր :

Էր եւ այր մի ծեր թարգի , որ վանաց եւ եկեղեցեաց զգեստ կարէր եւ չուրջառնի նոր . եւ զհինս կարկտէր . բոլոր տարին չորապաք .  
 75 եւ աղուհացն շարթէ շարաթ միաճաշակ լինէր . փա՛ռք Աստուծոյ :

Կայր երկու լուսրար , ընտիր ճգնաւոր . զի երկու օրն անգամ մի ճաշակէին . եւ այն սակաւ բանջար խարչեալ եւ պաքսիմատ մի  
 80 փոքր . եւ սօքա ամենեւին ոչ ննջէին ի վերայ մահճաց կամ անկողնոյ . այլ կանգուն կամ նստման սակաւ մի նիրհէին :